ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**

**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**


**Հաշվետվություն թիվ 132, 08.11.2016թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Բագրատ Ճզմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 08.11.16 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

08 նոյեմբերի 2016 թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի  2016 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 02/03Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը կցվում է):

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ԲԺ 0201 – N 02/03Լ
Դաս: ՀՊ
«08» նոյեմբերի 2016թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^1$-ի 2-րդ մասի ա) և գ) կետերը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 67-ի 1-ին մասի ա), գ) և է) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 10.2 կետի ա), գ) և ժ) ենթակետերը՝ Բանկի բաժնետերերի արտահերթ հրավիրված ընդհանուր ժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հաստատել 2016 թվականի հուլիսի 20-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից լրացուցիչ թողարկված 483,230 (չորս հարյուր ութսուն՝երեք հազար երկու հարյուր երեսուն) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքներն առ այն, որ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերից

1) RURAL IMPULSE FUND II S.A., SICAV-SIF հիմնադրամի կողմից, իր մասնակցությանը համամասնորեն ձեռքբերման նախապատվության իրավունքից մասնակի օգտվելու արդյունքում, ձեռք է բերվել 23,312 (քսաներեք հազար երեք հարյուր տասներկու) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի համար վճարվել է 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ,

2) ՖԼԵՇ ՍՊԸ կողմից, իր մասնակցությանը համամասնորեն ձեռքբերման նախապատվության իրավունքից ամբողջությամբ օգտվելու և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ մյուս բաժնետերերի կողմից ձեռքբերման նախապատվության իրավունքից մասնակի օգտվելու կամ չօգտվելու և բաժնետոմսերի ձեռք չբերման արդյունքում, ձեռք է բերվել 459,918 (չորս հարյուր հիսունինը հազար ինը հարյուր տասնութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի համար վճարվել է 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 4.1 կետը փոփոխել՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ.

| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ | Որոշում<br>ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները հաստատելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին | Կոդ: ԲԺ 0201 – N / Լ<br>Դաս: ՀՊ<br>Ամսաթիվ: «08» նոյեմբերի 2016թ. |
|---|---|---|

«4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 8,803,655,000 (ութ միլիարդ ութ հարյուր երեք միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր երեսունմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափը սահմանված է 3,000,000 (երեք միլիոն) հատ բաժնետոմս:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Ժողովի նախագահ՝** **Բ. Բեգլարյան**